



**2012 PUBLIC EXAMINATION**

# **Armenian**

## **Continuers Level**

**Section 1: Listening and Responding**

**Transcript**

## Section 1, Part A

### Text 1

- Աւոն: Սիլվա՛, քու օգնութեան պէտք ունիմ Սեւանին տարեղարձի հրաւէրները պատրաստելու:
- Սիլվա: Լաւ Լեւմն, ինչու<sup>՞</sup> չէ: Համակարգիչով շուտ մը կը վերջացնենք: Նախ բնագիրը պատրաստենք:
- Աւոն: Ուրեմն ես մտածեցի, որ իր 18-րդ տարեղարձը պէտք է յասուկ եւ անմոռանալի առիթ մը ըլլայ:
- Սիլվա: Անակնկալ թող ըլլայ այս պարագային:
- Աւոն: Բացառիկ գաղափար:
- Սիլվա: Օ՛չ, նաև ներառենք կարգ մը դերասաններու նկարները ու խնդրենք, որ բոլորը ներկայանան իրր հոչակաւոր դէմքեր: Սրահի պատրաստութեան ալ կ'օգնե՞ս:
- Աւոն: Անշուշտ: Ինձի համար մեծ հաճոյք է:
- Սիլվա: Շնորհակալ եմ: Ուրեմն հրաւէրին վերջաւորութեան ալ յիշենք որ բոլորը ներկայ պէտք է ըլլան երեկոյեան ժամը 8:00 ին, որպէսզի երբ Սեւանը հասնի, բոլորս միասին բարի տարեղարձ մաղթենք:

## Text 2

Աահակ: Ալլո՛, Աահակն է խոսում, Մեղեղի՛, ինչպէ՞ս ես:

Մեղեղի: Լաւ, չնորհակարութիւն:

Աահակ: Զայնիցդ զգացւում է, որ վիրաւորւել ես ինձանից երէկուայ տհաճ միջաղէպի պատճառով, այնպէս չէ՞:

Մեղեղի: Այո՛, Աահակ, չեմ թաքցնի, ինչ որ կատարւեց երէկ շատ վիրաւորական էր ինձ համար:

Աահակ: Հենց դրա համար էլ զանգահարել եմ, որ ներողութիւն խնդրեմ: Ներիր ինձ, ուղղակի ես ակամայ բռնկւեցի եւ այնպիսի բաներ ասացի ու արեցի, որոնց համար ես խակապէս զզչում եմ:

Մեղեղի: Գիտե՞ս Աահակ, սա արդէն երկրորդ անգամն է, որ դու վիրաւորում ես ինձ: Պէտք է կարողանաս զսպել զգացմունքներդ ընկերական շրջապատում:

Աահակ: Այո՛, գիտեմ: Ես փոքր-ինչ տաքարիւն եմ, զու ձիշդ ես: Բայց ես ամէն ինչ կանեմ, որ շտկեմ իմ այդ թերութիւնը: Ի՞նչ կատես, եթէ քեզ օգնեմ այն բարդ թւարանութեան առաջաղրանքը լուծելու: Հակառակ անոր, որ շատ վարպետ թւարանագէտ չեմ:

Մեղեղի: Շատ լաւ: Համաձայն եմ: Աահակ, ես շատ եմ գնահատում քո օգնութիւնը:

Աահակ: Ուրեմն ներո՞ւմ ես:

Մեղեղի: Դէ իհարկէ, Աահակ, չէ՞որ մենք ընկերներ ենք: Ընկերներ միշտ ներում են իրար:

Աահակ: Շնորհակալ եմ, Մեղեղի: Խոստանում եմ, այլեւս այդպէս չեմ վարուի քեզ հետ:

Մեղեղի: Ես էլ քեզ եմ չնորհակալ օգնութիւնդ առաջարկելու համար: Ուրեմն կտեսնենք: Յակատաթիւն, Աահակ:

Աահակ: Յտեսութիւն:

### Text 3

ՎԵՀԱՆ: Կարօ՛, դու վաղը ազա՞տ ես:

Կարօ: Այո, ՎԵՀԱՆ, ինչո՞ւ ես հարցնում:

ՎԵՀԱՆ: Վաղը մեր քաղաքում մեծ ու շքեղ նորաձեւութեան ցուցադրութիւն է լինելու: Ի՞նչ ես կարծում, չգնա՞նք:

Կարօ: ՎԵՀԱՆ, ես այնքան էլ ցանկութիւն չունեմ մասնակցելու այդ ցուցադրութեանը:

ՎԵՀԱՆ: Բայց ինչո՞ւ, Կարօ: Մեզ հաճելի ժամանց է սպասում: Բացի այդ անվճար ուսեստեղիններ են սպասարկելու:

Կարօ: Հիանալի՛, բայց ես միայն տղամարդկանց նորաձեւութամբ եմ հետաքրքրում: Բացի այդ, մի լաւ ծիծաղելու առիթ կտամ ընկերներիս, եթէ իմանան, որ ես կանացի բաներով եմ զբաղւում:

ՎԵՀԱՆ: Տղամարդկանց հագուստներ էլ սկսի ցուցադրւեն: Զմոռանաս Հայկն էլ է գալու:

Կարօ: Իսկապէ՞ս: Մեր Հայկը, որ ուսկալի՞ է խաղում: Կատակ ես անում:

ՎԵՀԱՆ: Այո՛, ինչո՞ւ ես զարմանում:

Կարօ: Ուզզակի հետաքրքիր է: Կարծում եմ, ես ալ կդամ, մանաւանդ որ այդ օրը ոչինչ ունեմ անելու:

#### Text 4

Բարի երեկոյ սիրելի՝ ունկնդիրներ: Ես՝ Շահնթ Յակոբեան, այսօրուան մեր «Մաքի Սնունդ» յայտագրի հիւրը՝ Տիկին Սաթենիկ Կիւրծեանը, կը ներկայացնեմ: Բարի եկած էք, Տիկին Սաթենիկ:

Տիկ. Սաթենիկ: Բարի տեսանք:

Խօսնակ: Ուրեմն սկսինք կարեւորագոյն հարցումով: Ի՞նչն է ճաշի մը ամենակարեւոր բաղադրութիւնը:

Տիկ. Սաթենիկ: Ամէն ճաշ իրեն յատուկ բաղադրութիւնը ունի: Այս մէկը ըսելով անշուշտ կարեւոր է անլի ճաշեր չպատրաստել: (Երկուքը կը խնդան): Իսկ բարոյապէս կը կարծեմ, որ սէրով պատրաստուած ճաշերը ընտանիքները կը միացնեն:

Խօսնակ: Յստակ է, որ խոհարարութեան արհեստը ձեզի համար Սուրբ աշխատանք մըն է:

Տիկ. Սաթենիկ: Ու ամէն առառու արթնալուս միակ պատճառն է: Կերակուր եփելը արուեստ է եւ սիրոյ մեծագոյն արտահայտութիւնը: Կատարեալ եւ համեղ ուտելիք պատրաստելու համար խոհարարը պէտք է կարողանայ ճաշակողին մանկութեան յիշատակները վերակենդանացնել:

Խօսնակ: Ի՞նչ ըսել կուզէք:

Տիկ. Սաթենիկ: Մարդու զգայարանները իրենց յիշողութեան մէջ կ'արձանագրեն բոլոր յիշատակները: Երբ ես հոտոտամ ոսպապուրը, կը յիշեմ մեծ մայրս: Իր սեղանին շուրջ բոլորս կը վայելէինք տաքուկ ճաշը, պատմութիւններն ու սէրը: Նմանապէս իմ եփած ճաշերովս ես կը փորձեմ նոյն աւանդութիւնը պահել ու անցեալի ուրախ օրերը վերակենդանացնել:

Խօսնակ: Տիկին Կիւրծեան, շատ շնորհակալ ենք, որ այսօր մեր հիւրը եղաք:

## Text 5

Սիրելի՝ ներկաներ,

Բարի գալուստ կը մաղթեմ բոլորիու՝ զիրքերու նուիրուած միջազգային 20-րդ տօնակատարութիւններուն:

Դիրքը մեր մտքերը զարգացնող եւ երեւակայութեան մեր աշխարհը լայնածաւալ դարձնող տարրն է: Այս ուժ կը պարզեւէ ընթերցողին: Ինչպէ՞ս կրնանք չփանալ զիրք կոչուող այս հրաշալիքին վրայ:

Այսօր մենք շատ երախտապարտ պէտք է ըլլանք, որ արուեստագիտութիւնը կը քաջալերէ ընթերցողն ու ընթերցանութիւնը: Մենք ամենայն դիւրութեամբ կրնանք որեւէ զիրք կարդալ համացանցի վրայ՝ առանց սենեակին դուրս ելլերու:

Սակայն արուեստագիտութիւնը կրնայ նաև դառնալ շատ վնասակար եւ զրքին գոյութիւնը վտանգող միջոց մը: Դժբախտաբար՝ կը նայիմ իմ թոռներուս ու երեխաներուս եւ կը տեսնեմ թէ անոնք զիրքերէն կը հեռանան ու իրենք զիրենք զբաղ կը պահեն անիմաստ խաղերով ու համացանցային ժամանցներով: Անոնք կը կորսնցնեն կարողութիւնն ու համբերանքը զիրք մը կարդալու:

Ուրեմն, ուշադիր ըլլանք եւ պահպանենք զիրքերը կորուստէ:

## Section 1, Part B

### Text 6

**Յասմիկ:** Բարեւ Ատելիան, ինչպէ՞ս ես:

**Ատելիան:** Ինչպէ՞ս պէտք է յինեմ, շատ վաստ: Սա էլ կյա՞նք է: Ամբողջ օրը քննութիւն ու տնային առաջադրանքներ: Ոչ ընկերներիս եմ հանդիպում, ոչ էլ կարողանում եմ մի տեղ գնալ:

**Յասմիկ:** Ճիշտ ես ասում, Ատելիան: Քննութիւնները չափից շատ են:

**Ատելիան:** Յասմիկ ջան, բոլորս էլ հասկանում ենք, որ շատ պարապելը կարեւոր է աւարտական քննութիւններում բարձր նիշեր ստանալու համար: Բայց շունչ քաշելու ժամանակ չի մնում: Մաղրասով անգամ չեմ կարողանում գրադւել:

**Յասմիկ:** Իսկ այն օրը ժողովի ժամանակ տնօրինը ասում էր, որ առելի շատ պէտք է պարապենք: Միակ զրախան բանն այն է, որ ժամանակ չունեմ կարգին մնելու եւ արդին 3 կտ նիշարել եմ:

**Ատելիան:** Ես էլ հակառակն եմ: Անընդհատ ուստում եմ: Լաւ կլինէր, որ մեր տնօրինը հասկանար մեր վիճակը: Մտածում եմ մի նամակ զրել իրեն:

**Յասմիկ:** Ես գիշերներն անգամ, երբ պառկում եմ, մտածում եմ կիսատ մնացած դասերիս մասին ու անհանգստութիւնից կարգին չեմ քնում: Այն օրն էլ տատիկիս տարեղարձն էր, չգնացի: Այնքա՞ն դաս ունի անելու:

**Ատելիան:** Դէ ո՞վ է մեր մասին մտածում: Ուսուցիչները դասացուցակը կազմում են այնպէս, ինչպէս իրենց է յարմար:

**Յասմիկ:** Մայրս ասում է, որ մինչեւ տարին վերջանայ, ինձնից ոչինչ չի մնայ:

**Ատելիան:** Ես կարծում եմ, որ այսքան պարապելով տարւայ վերջում երեւի հոգեկան խանգարում ստանամ:

**Յասմիկ:** Դէ լաւ, մի՛ անհանգստացիր: Մեղ նման շատերն են դպրոցն աւարտել, բայց հոգեկան հիւանդ չեն դարձել:

## Text 7

- Արամ: Բարեւ Մարի՛: Ենթաղրեցի, որ տակաւին կ'աշխատիս եւ եկայ գործառեղղ քեզի այցելելու:
- Մարի: Բարեւ Արամ: Ես ալ քեզի հետ քիչ մը կը նստիմ ու կը հանդստանամ հիմա: Գիտե՞ս, ձաշէն յետոյ շատ զբաղ չենք ըլլար:
- Արամ: Կը զարմանամ, որ այլ աշխատանք չես փնտռեր: Կեցեր ես այստեղ ու ամբողջ օրը սեղաններ կը սպասարկես:
- Մարի: Ես շատ կը սիրեմ այստեղ աշխատիլ, մարդոց հետ շփուիլ: Նոյնիսկ ինձի կը պատրաստեն վարպետ խոհարար ըլլար:
- Արամ: Բայց դուն փափաք չունիս խոհարար դառնալու: Ժամանակ կը վատնես:
- Մարի: Արամ, ոչինչ ի զուր չէ: Աւելի լաւ է, դուն նոր աշխատանք փնտռես: Նստած ես այդ ձանձրացուցիչ գրասեննեակին մէջ, ձանձրացուցիչ գործառիրոջդ հետ եւ միայն զրամ շահելու մասին կը մտածես:
- Արամ: Մարի, եթէ գործի մէջ զրամ կայ, կարեւոր չէ ձանձրացուցիչ ըլլալը: Կը հասնիս իմ տարիքիս ու կը հասկնաս:
- Մարի: Տարիքը կապ չունի, Արամ: Ես իմ սիրած գործու կ'ընեմ նոյնիսկ եթէ վճարումը ցած է:
- Արամ: Մարի՛, դուն գիտես, որ ես չութակ նուազել շատ կը սիրեմ, բայց չութակ նուազելով ես բարձր գումար չեմ վաստակեր:
- Մարի: Արամ, կրնայ ըլլալ, որ զղջաս առած որոշումիդ:
- Արամ: Մարի՛, ես երբէք չեմ զղջար: Ես կեանքը հասկցած եմ իմ վորձառութիւններէս:
- Մարի: Չեմ զիտեր, երեւի դուն ձիշդ ես: